# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
## № ԳՀԱՊՁԲ-7/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

30 .03.2020թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս.Թարվերդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 28.12.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **12115350** (տասներկու միլիոն հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ<br><br>Ն. ՅՈԼՉՅԱՆ | «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ<br>ՀՀ, ք.Երևան, Վ.Դավթյան 13<br>Էվոկաբանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1660002787610100<br>ՀՎՀՀ 05523921<br>տնօրեն<br><br>Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-7/2-2 N 2 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ.-ին ըստ ամիսների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր |
| 1 | պահածոյացված բանջարեղեն (Կարմիր լոլիկ սեփական հյութում) | կգ | 31065 | 390 | | 6000 | 6000 | 6000 | 6000 | 7065 | |

**Ծանոթություն՝** մատակարարումը ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-7/2-2 N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների. բայց ոչ ուշ քան 10.12.2020թ* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | պահածոյացված բանջարեղեն (Կարմիր լոլիկ սեփական հյութում) | 15331178/2 | 2340000 | 4680000 | 7020000 | 9360000 | 12115350 | 12115350 | 12115350 | 12115350 | 12115350 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ առաջնահերթության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արարատ Սենդի Կոմբինատ» ՍՊԸ
տնօրեն

Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ